

ՇՆՈՐՅԱԿՈՐ ՀՈՒՔԵԼՅԱՆԴ, ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԱՐՔԱ

Ժամանակակից բանաստեղծ, թարգմանիչ Գիվի Շահնագարի ծննդավայրը թբիլիսին է: Ավարտել է Թբիլիսիի Պետական համալսարանի հայագիտության ֆակուլտետը: Երկար տարիներ աշխատել է Վրաստանի թարգմանական կոլեգիայում, 1984-87 թվականներին Թբիլիսիի Ստեփան Շահումյանի (այժմ՝ Պ.Ադամյանի) անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավարն էր: 1997թ.-ին Վրաստանի Պետական գրասենյակի ազգամիջյան փոխհարաբերությունների կազմակերպիչ ռեֆերենտի պաշտոնակատար: Որպես խմբագիր աշխատել է «Լեզգու» լեզվաբանական գրականության և հրատարակչության խմբագրությունում:

գրքերով: Լինելով մեր երկու հինավուրց ժողովուրդների բարեկամության փայլուն խորհրդանիշը՝ նա իր անընդելի հետքն է դրոշմել այդ բարեկամության բազմադարյան պատմության մեջ:

Եթե մատենագրելու լինենք նրա թարգմանական վաստակը, նրանում կգտնենք հայ պոեզիայի դարավոր ընթացքը: Գրիգոր Նարեկացի, Նահապետ Քուչակ, Սայաթ-Նովա, Հովհաննես Թումանյան, Ավետիկ Իսահակյան, Վահան Տերյան, Եղիշե Չարենց, Պարույր Սեւակ, Համո Սահյան, Սիլվա Կապուտիկյան, Վիկտոր Հովսեփյան, արդի բանաստեղծներ... Հնագույն ակունքներից մինչև նորագույն շրջանը ձգվող գրական մշակույթի այս կառույցը կարող է այլազգի ցանկացած ընթերցողի գաղափար տալ՝ իրեն համար օտար այդ գրականության մասին: Այս դեպքում դա վրաց ընթերցողն է և նրա սեղանին հայ մշակույթի գանձերն են գեղարվեստական ամփոփագիրը ազգային մտածողության և, ինչու չէ, հայ մարդու նկարագրի:



Մեծ ու անգնահատալի է Վրաստանի ու Հայաստանի գրողների միությունների Ի.Վ.Մաչաբելու ու Եղ.Չարենցի մրցանակների, Վրաստանի «Պատվո նշան» շքանշանի, Հայաստանի «Մովսես Խորենացի» մեդալի ասպետ, Թբիլիսիի «Պատվավոր քաղաքացի» կոչումը ստացած Գիվի Շահնագարի ծառայությունը վրաց-հայկական գրականությունների աղերսման ճանապարհին: Գտնվելով թարգմանչի իր սովորական դերում՝ Գիվի Շահնագարը, փաստորեն, կատարում է վրաց ու հայ ժողովուրդների հոգեւոր դեսպանի առաքելություն, որի ցանկությունը, այս ժողովուրդների հոգեւոր գանձերը իրարով ճանաչել տալով, նրանց միմյանց մերձեցնել է: Այսօր, երբ ժողովուրդների համերաշխ գոյակցությունը բազում փորձությունների է ենթարկվում, անհնար է Գիվի Շահնագարի թարգմանական գործունեությունը նաեւ ա՛յդ տեսադաշտից չհիտելը և չուրախանալը, որ օգտակար այդ գործը շարունակվում է իր բեղուն ընթացքով:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱՅԱՆ

ՃՇՄԱՐԻՏ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԱԿԱԿԻՐ

Երբ մտածում են Գիվի Շահնագարի մասին, ապա անմիջապես պատկերացնում են Սայաթ-Նովային: Ինչպես Սայաթ-Նովան էր հանդիսանում երեք ազգերի՝ վրացիների, հայերի ու ադրբեջանցիների երգիչը, այնպես էլ՝ պարոն Գիվին վրացիների ու հայերի հարազատ զավակն է, ապրում է նրանց ուրախությամբ ու ցավով...

կան կյանքը: Այդ ժամանակահատվածում նա հայկական պոեզիայի մի շարք գլուխգործոցներով հարստացրեց վրացական գրականությունը՝ Նարեկացի, Քուչակ, Հովհաննես Թումանյան, Ավետիկ Իսահակյան, Վահան Տերյան, Եղիշե Չարենց, Համո Սահյան, Պարույր Սեւակ, Հովհաննես Շիրազ, Սիլվա Կապուտիկյան, Վահագն Դավթյան, Սոնա Վան Կուրաբյան ու հարուստ Հայ գրչության այս դասականներին վրացին է ողջ Վրաստանը ծանոթացավ հենց Գիվի Շահնագարի թարգմանությամբ:

Այս հիանալի գործն ու անհատականությունը լի իմաստությամբ ու բարոյաբանությամբ, այդպիսին է կմնա:

Նա ինձ համար մեծ անհատականությունն ու ստեղծագործող է, իմաստուն, հանգիստ, հավասարակշռված, խոհուն: Մարդ, ով մշտապես հավատարիմ է այբբենական ճշմարտությանը, ինչը, ցավոք, շատերն անտեսում են եւ օգտագործած անձեռնդիպի պես դեն նետում, իսկ այդ ճշմարտությունը այն է, որ աշխարհը միայն սերը կփրկի:

Պարոն Գիվին մաղթում են տարիների առատություն, քաջառողջություն: Թող որ երկար ժամանակ հնչեն նրա սրտից բխող երախտիքի ու սիրո խոսքերը:

ՄԱՂԱՎԱՆ ԳՈՆԱՇՎԻԼԻ
Վրաստանի գրողների միության նախագահ,
Ռուսավելու մրցանակի դափնեկիր



ՀԱՅ ԵՎ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԶԱՎԱԿԸ

Մտնելով է շատ սիրելի Գիվի Շահնագարի 90-րդ ամյակը: Գիվի Շահնագարը հայ է վրաց ժողովուրդների սիրելի զավակն է: Կրելով նրանց արյունը նա ոչ միայն որպես անհատ, որպես երկու ժողովուրդների որդի է ներկայանում, այլև իր ստեղծելով, իր բարեշնորհությամբ, թարգմանություններով նպաստում է երկու ժողովուրդների պատմության ճանաչմանը, մշակույթի պատմության ընկալմանը, երկու ժողովուրդների ավելի ամուր եղբայրությանն ու այդ կապերի ամրապնդմանը: Մարդկային իր տեսակով որքան շփվել են, տեսել են մի ազնվաբարո, ազնվական, հրաշալի մարդկային տեսակ, որը երեկ թե բոլորիս իր ներքին ռիթմով ուսուցանում է ճանաչել մարդկանց, սիրել ստեղծագործությունը, շարունակել մեր երկու ժողովուրդների ավանդույթները: Այո, մենք պի-

տի վստահաբար ասենք, որ հենց Գիվի Շահնագարի պես մարդիկ են ապացուցում, որ հայ է վրաց ժողովուրդները դարձրել ապրել են սերունդները: Երբ հայերի շարունակվել է՝ ապրեցնելով ստեղծագործությամբ, մեր մարդկային տեսակով, երբ մենք ենք ավելի գեղեցկացնել մեր երկու ժողովուրդների պատմությունը:

Շնորհավոր 90-րդ տարեդարձ, սիրելի պարոն Գիվի, ցանկանում են նոր գործեր, նոր գեղեցիկ թարգմանություններ:

ԵՐԿԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ
Հայաստանի գրողների միության նախագահ



«ՄԻՄՅԱՆՅ ԱՄԵՆ ՕՐ Է ՊԵՏԷ ՍԻՐԵԼ, ՄԱՐԴ ՊԵՏԷ Է ԱՊՐԻ ԲԱՐՈՒԹՅԱՐ ՈՒ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՐ»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԳԻՎԻ ՇԱՐՆԱԶԱՐԻ ՀԵՏ՝ ՕԳՈՍՏՈՍԻ 23-ԻՆ ԼՐԱՅՈՂ 90-ԱՄՅԱ ՀՈՒՔԵԼՅԱՆԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Ամեն մի ժամակաշրջան նվիրում է իր Մեծերին՝ մարդկությանը ծառայելու հատուկ առաքելությամբ: Իսկ Մեծերի հետ ապրողներս դառնում ենք այն երջանիկ սերունդը, ով հնարավորություն ունի կենդանության օրոք պատվելու և արժանին մատուցելու այդ Մեծերին: Ու, եթե ոչ ամեն օր, ապա գոնե հիշարժան տարեթվերին, մենք հանձնառու ենք դառնում նորից վերահիմաստավորելու ու խոնարհվելու նրանց վաստակի ու մեծության առջև:

Գրող, թարգմանիչ Գիվի Շահնագարն այսօր հորեյյար է: Պատկառելի 90 տարիների կրող: Մարդ՝ ով վրաց-հայկական ընտանիքից սերելով, կամրջել, միահյուսել ու իրար է կապել երկու քրիստոնյա ժողովրդի դարավոր ծառի նոր շիվերը ու՝ ապրած տարիներ, որոնց ամենօրյա հոսքը նոր էք է բացել վրաց-հայկական բարեկամական հարաբերությունների մատենագրության մեջ:

Երբ զանգահարեցինք, իր աշխատասենյակում էր: Ցավով պիտի մշն՝ մեր ավագ սերնդի վերջին մոհիկանը, նորից ինչ-որ բան էր պրպտում գրականության իր աշխարհում...

- Պարոն Գիվի, բարեւ Ձեզ: Չե՞մ խանգարում:
- Ընթերցում էի...
- Ինչպե՞ս եք, պարոն Գիվի:
- Լավ եմ, աղջիկս:
- Ձայնից զգում եմ:
- Մի՞թե, ոչինչ չի՞ փոխվել, գոնե ծայմիս մեջ:
- Բացարձակ, մույնիսկ նախատեսական տրամադրություն է նկատելի:
- Ի՞նչ տոն:
- Ձեր ծննդյան օրը՝ օգոստոսի 23-ին:
- Ի՞նչ էլ հիշում եք: Ես ոչ հիշում եմ, ոչ էլ սիրում իմ ծննդյան օրերը, պոմպեյ բաներ չեն սիրում: Ինձ համար սա սովորական օր է ու կլոր հորեյյանը ոչինչ չի փոխում: Ցանկացած օր, առավոտ, տոն է, նոր ծնունդ, նոր սկիզբ: Ի՞նչ պարտադիր է գնահատանք արտահայտելու համար ծնունդ լինի: Միմյանց սիրել ամեն օր է պետք: Մարդ պետք է ապրի բարությամբ ու միմյանց հանդեպ հոգատարությամբ:
- Այդուհանդերձ, երեկ զանգերն այդ օրը շատ-շատ են...
- Կարելոյը՝ հայ-վրացական են, միմյանց հաջորդելով:
- Ձեր ամբողջ ուղին է այդպիսին, արդյո՞ք երբեք գերազանցել է մեկը մյուսին:

- Երբեք: Հայրս հայ է, մայրս՝ վրացուհի: Հիմա պատկերացրեք, թե հարցնեն ո՞նց են ավելի շատ սիրում: Բնականաբար, երկուսին էլ հավասար...

- Գրիգոր Նարեկացի, Նահապետ Քուչակ, Սայաթ-Նովա, Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց, Համո Սահյան, Պարույր Սեւակ, Սիլվա Կապուտիկյան... վրաց ընթերցողին հենց Դուք եք նրանց ներկայացրել: Ի՞նչ է հարկավոր նման Մեծերին թարգմանելու համար:

- Աստվածային ուժ, գորություն:

- Այսինքն՝ թարգմանիչ ծնվո՞ւմ եմ:

- Չեն ծնվում, թարգմանությամբ ապրում են, ապրում ծնվելուց հետո, հավերժացնելով ապրող-չապրողին...

- Հիշո՞ւմ եք Ձեր առաջին ու այս պահին վերջին թարգմանությունը:

- Ինչպե՞ս չէ. առաջինը Միքայել Նալբանդյանի «Ազատությունն» էր, վերջինը՝ նորից Պարույր Սեւակը, նրանից երբեք չեմ հեռանում... իսկ դե, Նարեկն իմ հոգու աղոթքն է: Միշտ մտածել եմ, որ նրան թարգմանելով, երկրորդ կյանք եմ առել: Ի՞նչ իմանաս, մի գուցե սա է իմ երկարակյանության գաղտնիքը, ո՞վ գիտե...

- Իսկ բնավորության ո՞ր գծի հետ եք կապում թարգմանչի հաջողությունը:

- Այդ մասին երբեք չեմ մտածել, ինձ համար մշտապես կարելի է մարդկայնությունը և ոչ միայն թարգմանության մեջ: Ի՞նչ է թարգմանությունը՝ մարդկանց միջև սեր, հարգանք առաջացնելու ու պատիվ ձեւավորելու առաքելություն:

- Որեւէ մեկը թարգմանո՞ւմ է Ձեր ընտանիքում:

- Ոչ, բայց չեմ ցավում: Կարծում եմ, չես կարող ստիպել, ինչ է թե ուզում ես, որ մեկը շարունակի ուղիդ: Ամեն մի գործ պետք է սրտով ու սեփական կամքով անես, որ լավ ստացվի...

- Իսկ թարգմանչական արվեստում սաներ ունեցե՞լ եք:

- Գիտես, կարծում եմ, յուրաքանչյուր մարդ իր կենսագրությամբ է Ուսուցիչ...

- Հիշում եմ, մի անգամ մյուս էի պատրաստել Սայաթ-Նովայի մասին ու անվան դիմաց մի քանի անգամ, այդ թվում՝ հանձարեղ գրել: Երբ հանդիպեցի Ձեզ, բացատրեցիք, որ...

- Այո, հիշում եմ, ասացի, որ Մեծերն անգամի կարիք չունեն, անգամները ստորոգյալներն են, մեր լավ կամ վատ, արած կամ չարած գործողությունները...

- Կյանքի Ձեր ստորոգյալը...

- Սիրելի...

- ...Քիչ առաջ ասացիք, որ յուրաքանչյուր օր Ձեզ համար նոր ծնունդ է: Ուրեմն եւ Ձեզ շնորհավորելու լիարժեք իրավունքն ունենե՞ք նաեւ այսօր:

Սիրելի պարոն Գիվի, շնորհավորում ենք «Վրաստան» թերթի աշխատակազմի ու բոլոր ընթերցողների անունից, Ձեզ ամուր ու անսասան առողջություն, խոնարհում ու շնորհակալություն սեր սերմանելու, թարգմանչական անզուգական ժառանգության մեջ մեծագույն ավանդի համար:
ԳԱՅԱՆԵ ԲՈՍԱՆՋԱՆ

ՀԱՐՑ - ՊԱՏՎԱՍԽԱՆ ԱՅԼԱԶԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԱՐԵՎԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Այս շոգ օրերին հաճախ են գրում արեւի անմիջական ճառագայթների պաշտպանվելու անհրաժեշտության մասին: Գուցե բացառությամբ կոնկրետ խոսքը արելի՞ ճառագայթների մասին է: Ա.ՎԱՆՅԱՆ Լինոթմինդա



Խոսքը հիմնականում վերաբերում է ինֆրակարմիր ճառագայթներին, որոնք բացառապես ջերմային ազդեցություն են գործում, դրա համար էլ երբեմն կոչվում են ջերմային ճառագայթներ: Մաշկի միջոցով թափանցում են մինչև 20 մմ խորությամբ՝ դրանք ընդունակ են հանել մկանային ջրածրությունը, լայնացնել անոթները, լավացնել նյութափոխանակությունը: Գոյություն ունի նաև ռադիոազդեցությունը: Գոյություն ունի նաև վնասակար հատկություն, ջրազրկում է ժամանակից շուտ ծերացնում են մաշկը, կարող են ուռուցքային հիվանդություններ հրահրել: Այդ պատճառով ուլտրամանուշակագույն ճառագայթները սակավ են կիրառվում, խիստ անհրաժեշտության դեպքում:

Ուլտրամանուշակագույն ճառագայթները այդքան խորը չեն թափանցում (ընդամենը 1

մմ) և չեն տաքացնում: Դրանք ունեն այլ ազդեցություն, ազդում են մաշկի վրա, արթնացնում օրգանիզմի կենսաբանական ակտիվ նյութերը, ավելացնում՝ հեմոգլոբինը, խթանում շնչառությունը, ունեն հակաբորբոքային և ցավազրկող հատկություն: Սակայն ունեն նաև վնասակար հատկություն, ջրազրկում է ժամանակից շուտ ծերացնում են մաշկը, կարող են ուռուցքային հիվանդություններ հրահրել: Այդ պատճառով ուլտրամանուշակագույն ճառագայթները սակավ են կիրառվում, խիստ անհրաժեշտության դեպքում:

ԳԻՏԵՔ, ԱՐԴՅՈՔ...

ՉԻ ԿԱՐԵԼԻ ԵՐԿԱՐ ՆԱՅԵԼ ՀԱՅԵԼՈՒՄ



Խոր միջնադարից, հայելու պարաստման տեխնոլոգիայի յուրաքանչյուր անմիջապես հետո, այդ իրին գերբնական հատկություններ վերագրեցին: Ասում են հայելուն երկար նայելը վնասակար է: Կարող է խախտել նյութափոխանակությունը, հարկ է խոստովանվել, որ այն յուրաքանչյուր «անծծի բույն է»: Հետաքրքիր է իմանալ, թե որքանով են ճիշտ նման պնդումները: Բ.ՄՈՐԻՍԿԱՆ Ախալքալաքի

Որքան էլ տարօրինակ լինի, նման պնդումներում կա ճշմարտության որոշակի բաժին: Հատկապես կանայք սիրում են երկար նայել հայելու մեջ իրենց արտացոլանքին: Սակայն հայելուն երկար նայելու դեպքում, հատկապես սեփական աչքերի մեջ, մարդը զգում է հոգնածություն և հիշողության կորուստ: Գիտնականները վաղուց են ապացուցել, որ հայելին ենթարկվելու դեպքում, համակարգի առաջ կան ընթերցել, ավելի կարգապահ են ու իրենց առողջությանը հետևող, պարբերաբար մարզվում են, ավելի հետևողական են ու պակաս զգայուն, քան էքստրավերտները: Այդ իսկ պատճառով նրանք հիմնականում նիհար են:

Կարող է խախտել նյութափոխանակությունը, հարկ է խոստովանվել, որ այն յուրաքանչյուր «անծծի բույն է»: Հետաքրքիր է իմանալ, թե որքանով են ճիշտ նման պնդումները: Բ.ՄՈՐԻՍԿԱՆ Ախալքալաքի

ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄՎԱԾՔԸ

Շփվող մարդիկ հաճախ են լինում ընկերակցություն, հյուր են գնում, մասնակցում միջոցառումների: Որպես կանոն, նրանք հաճախ են գայթակղվում, հավանականությունը մեծ է, որ ուտեն կամ անեն որեւէ անօգուտ բան:



Ինտրովերտները (ներքին անհատ) սիրում են նստել տանը, համակարգի առաջ կան ընթերցել, ավելի կարգապահ են ու իրենց առողջությանը հետևող, պարբերաբար մարզվում են, ավելի հետևողական են ու պակաս զգայուն, քան էքստրավերտները: Այդ իսկ պատճառով նրանք հիմնականում նիհար են:

Եքստրավերտներին դժվար է նիհարել, քանի որ ավելի ինտուիտիվ են, կախված տրամադրությունից, մի ծայրահեղությունից հայտնվում են մեկ այլ ծայրահեղության մեջ, հակված են ընկճախտի (դեպրեսիա), ինչի հետևանքով քաղցրեղենի ու կալորիական սննդի կարիք են զգում: Նրանց դժվար է կենտրոնանալ որեւէ մեկ զբաղմունքի վրա, չեն սիրում կարգապահություն, խուսափում են պարբերական մարզանքից:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԸՆՏԱՆԻՔ. ՎԼԽԱՎՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ՈՒ ԹՆՆԱԽՆԵՐԸ

Այս հրապարակման պատճառը դարձավ խմբագրության էլեկտրոնային փոստով ստացված նամակը: Իր անվան եւ ազգանվան սկզբնատառերով նամակը ստորագրող անձը պատմում է առաջին հայացքից սիրո վրա հիմնված, սակայն, բարդությունների դեմ պայքարում, քաջայված մեկամյա ընտանիքի պատմությունը: «Մեկ տարուց ավելի հանդիպում էինք, սիրով ամուսնացանք, հետո ամեն ինչ փոխվեց: Իրավիճակն առավել սրվեց երեխայի ծնվելուց հետո: Դադարեցինք միմյանց հասկանալ, յուրաքանչյուր խոսք կասկածով ու քննադատորեն էինք ընդունում: Պատեհ-անպատեհ առիթներով վեճերի վերջը չէր երևում: Ամեն ինչ ձանձրացրել ու հոգնեցրել էր: Միակ ելքը բաժանվելն էր», - գրում է 24-ամյա Ա.Ս.-ն: Խմբագրությունը ստացած նամակը վերահասցեագրեց հոգեբան Արամ Սամուկյանին: Ստորեւ ներկայացնում ենք հոգեբանի դիտողությունները:



Ցավոք, քայքայվող ընտանիքների տոկոսը տարեցտարի աճում է, նորաստեղծ ընտանիքների քանակը՝ նվազում: Միանգամից ասեմ, որ առանձին վերցրած ընտանիքների քայքայման պատճառների մասին խոսելը որոշ չափով անշնորհակալ ու անհիմաստ ժամանակի վատնում է: Չեմ անդրադառնա ընտանիքի քայքայման պատճառներին, այլ կխոսեմ այն մասին, թե ինչու էլ պետք է ընտանիքը լինի ամուր եւ ինչպե՞ս անել, որպեսզի այն ամուր մնա:

Պատեհ-անպատեհ առիթներով վեճերի վերջը չէր երևում: Ամեն ինչ ձանձրացրել ու հոգնեցրել էր: Միակ ելքը բաժանվելն էր», - գրում է 24-ամյա Ա.Ս.-ն: Խմբագրությունը ստացած նամակը վերահասցեագրեց հոգեբան Արամ Սամուկյանին: Ստորեւ ներկայացնում ենք հոգեբանի դիտողությունները:

Մարդիկ երկու տեսակի գործողություններ են կատարում կյանքում՝ գիտակցված ու չմտածված: Մենք կարող ենք չմտածված վրդովվել, կոպտել, կարող ենք հակառակը՝ կարեկցել, հոգալ, տարվել, սակայն պետք է չմտածված կերպով ամուսնանալ, բաժանվել, անցնել աշխատանքի, ընդունվել համալսարան, այսինքն՝ որոշումները կայացնում ենք անենայն պատասխանատվությամբ: Շատերն ամուսնանալուց առաջ գիտեն, որ երբեւէ չեն բաժանվելու: Դա ճիշտ մոտեցում չէ, որովհետեւ այդ «գիտենալը» նշանակում է, որ կա արտաքին, չգիտակցված գործոն, որում դուք հանդիպած եք, բայց որը միայն ձեզանից կախված չէ: Դա պիտի լինի ոչ թե «իմանալու» մակարդակով, այլ գիտակցված որոշման, եւ այն պարզ պատճառով, եթե դուք ամուսնանալու պահին նման որոշում համատեղ չեք կայացնում, ամուսնանալն անիմաստ է:

վում մեկա մյուսին, ձեռք ենք բերում իմաստություն: Ընտանիքում ձեռք բերած փորձը օգնում է մեզ հաղթահարել նաեւ արտաքին փորձությունները, իսկ ընտանեկան սերտ ընկերային կապը դառնում է այդ պահերին մեր հիմնական հենարաններից մեկը: Սակայն ընտանեկան փորձությունները երբեք չեն պակասում:

Փոխադարձ սերը, ջերմությունը, ընդհանուր հետաքրքրությունները շատ լավ նախադրյալներ են ընտանիք կազմելու համար, քանի որ հեշտացնում են մերձեցումը եւ բազմացնում հաճույքները: Դրանք, սակայն, նաեւ ընտանիքի գլխավոր թշնամիներն են, քանի որ թմրադեղի նման փափկացնում են սկիզբը, իսկ հետո նահանջելով՝ մերկացնում են մեզ իրականության առջեւ, ինչին մենք պատրաստ չենք լինում: Հետաքրքրությունները կարող են փոխվել, սիրո եւ ջերմության արտահայտումների աստիճանը՝ նվազել: Եվ ստացվում է, որ «առանց այդ մարդու» ավելի լավ էր, քան «այդ մարդու հետ»: Այո՛, իհարկե, առանց փորձությունների ապրելը շատ ավելի հեշտ է, քան գնալ փորձությունների ճանապարհով: Եթե ձեր նպատակը հեշտ ապրելն է, ապրեք ձեր հաճույքների համար, բայց գերծ մնացեք այլ մարդկանց եւ, առավել եւս, ձեր ապագա երեխաներին, հաճույքների գործիք դարձնելուց: Եթե ձեր նպատակը զարգանալը եւ ամրանալն է, հոգեւոր եւ մարդկային արժեքներ ձեռք բերելը, ամուր, հաշտ եւ հավասարակշռված դառնալը, սեփական երեխաների մեջ լուրջ ներդրվելը (իսկ դա կյանքի լավագույն ներդրումն է), ապա՝ ամուսնացեք, բայց որոշեք, որ այլեւս չեք հեռանալու իրարից եւ պայքարեք այդ որոշման համար կյանքի գնով, քանի որ դա է ամուսնության իմաստը: Այլ կերպ ասած, եթե ընտանիքը ձեր կյանքի ամենակարեւոր բանը չէ, այն կազմել իմաստ չունի:

Ընտանիքը ստեղծվում է ոչ միայն երջանիկ ապրելու, այլ համատեղ փորձություններ ունենալու համար: Մարդիկ ի սկզբանե թերի են, եւ անխուսափելի է, որ սերտ շփման ընթացքում իրար ոչ միայն կարող են ուրախացնել, այլեւ շատ հաճախ ցավ պատճառել: Փորձությունները համատեղ հաղթահարելով՝ մենք ամրանում ենք, դառնում ավելի հասուն, ավելի ենք կապ-

- Չ - Հայտարարություն. «Կզենեմ բնակարան երկհարկանի տանը: Առաջին եւ վերջին հարկերը չառաջարկել»:
- Չ - Մեր դասախոսն ինքն իր հետ խոսում է:
- Չ - Մերն էլ, միայն նրան թվում է, որ մենք իրեն լսում ենք:
- Չ - Ամենավտանգավոր ուտեստը թեյն է:
- Չ - Այն միշտ ուղեկցվում է տոթով, թխվածքով, քաղցրավենիքով, մրգերով...
- Չ - Ալլո, մայրիկ, այսօր կիրակի է, եւ իմ ընկերները ինձ մի փոքր ուշ տուն կբերեն:
- Չ - Բարեկամները նրան համարում էին անկիրթ, քանի որ կնոջը մտրակով էր ծեծում, ապա՝ փակում էր նկուղում:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

- Դուք, որ ցանկանում եք թագավոր դառնալ, արժանի թագուհի ընտրեք ձեզ համար: ԱՆԴՐԵ ՄՈՐՈՒԿ
- Կանանցից խնդրեք միայն այն, ինչ նրանք կարող են տալ: ԲԱՐԲԵ ՂԵ ՕՐԵՎԻԼՅՈՒ
- Ով սիրահարված կին չի տեսել, նա չի կարող ասել, թե ինչ է կինը: ԳՅՈՒԹ
- Կանացի բնագոյն արժե մեծ մարդկանց կանխատեսությանը: ԶԱՐԼԻ ԶԱՊԼԻՆ
- Ով ընդունակ է կառավարել կնոջը, նա ընդունակ է պետություն կառավարելու: ՕՆՈՐԵ ՂԵ ԲԱԼԶԱԿ
- Որտեղ կա սեր, այնտեղ կա Աստված: ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ
- Տղամարդիկ հաճախ իրենց սիրեցյալներին համեմատում են եղնիկի հետ: Բարեկամներ, մի՛ մոռացեք, որ եղնիկները լինում են տարբեր տեսակի, հաճախ հասնում են 120 կիլոգրամի: Բ.Վ
- «Վրաստանի» ընթերցող
- Մառնուկի

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊԵՏԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅԱՆՁՈՎ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը, օգոստոսի 16-ին, արտակարգ նիստ է հրավիրել՝ արձագանքելով Հայաստանի ահազանգին այն մասին, որ հիմնականում հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղը շրջափակման մեջ է հարեւան Ադրբեջանի կողմից, ինչի հետևանքով 120 հազար մարդ սովի է մատնվել ու բախվել լայնածավալ հումանիտար աղետի:

Օգոստոսի 17-ին, Հայաստանի կառավարության նիստում, երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ամփոփելով ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի նիստը՝ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետևանքով Լեռնային Ղարաբաղում հաստատված հումանիտար ճգնաժամի վերաբերյալ, առանձնացրեց հետևյալ արդյունքները.

- Առաջին միջազգային բարձրագույն ատյանում ընդգծվեց Լաչինի միջանցքի փակ լինելը:

Երկրորդ՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում տեղի ունեցած քննարկումը հաստատեց Լեռնային Ղարաբաղում հումանիտար ճգնաժամի առկայությունը:

ընդ էլ այն, որ Լեռնային Ղարաբաղի 120 հազար բնակչության կյանքն ու անվտանգությունը դրված են կասկածի տակ:

Երրորդ՝ ընդգծվեց, որ Ադրբայջանի միջազգային դատարանի որոշումը՝ Լաչինի միջանցքով անձանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների երկու ուղղություններով անխափան տեղաշարժելու արգելափակումը վերաբերյալ, Ադրբեջանի կողմից չի կատարվել:

Նիկոլ Փաշինյանի խոսքով, առաջին կարելի է արձանագրել, որ միջազգային բարձրագույն ատյանում ճշմարտությունը, Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման եւ դրա հետևանքով Լեռնային Ղարաբաղում հաստատված հումանիտար ճգնաժամի վերաբերյալ, բարձրաձայնված է: Նաեւ միջազգային հանրության կողմից հավաքական կոչ է հնչել Ադրբեջանին՝ վերացնել Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակումը, հայտարարեց վարչապետը՝ հավելելով, որ միջազգային հանրության այս կոչը, այս պահի դրությամբ, իրագործված չէ եւ 22 բեռնատար՝ շուրջ 400 տոննա հումանիտար բեռով, Լաչինի միջանցքի մուտքի մոտ սպասում է Լեռնային Ղարաբաղ մուտքի հնարավորությանը:



ԵՐԿՈՒ ՄԻՒԽՐԳ ՊՐՄ՝ ՀԱՆՎՊԱՐԶԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԴՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի կառավարությունն ավելի քան 2 միլիարդ դրամ է հատկացնում 60,7 կմ ճանապարհների միջին նորոգման աշխատանքների համար: Ըստ կառավարության նիստում ներկայացված նախագծի՝ նախատեսվում է ֆինանսավորել 60,7 կմ ճանապարհների միջին նորոգման աշխատանքների համար: Դրանցից 13 կմ-ը միջպետական ճանապարհներ են, 47 կմ-ը՝ հանրապետական ճանապարհներ: Ընդհանուր առմամբ, կհատկացվի 2 միլիարդ 24 միլիոն դրամ: Ամեն տարի, միջին նորոգման նպատակով, ասֆալտապատվում է 150 կմ ճանապարհ: Առաջիկայում եւս 90 կմ ճանապարհի համար ֆինանսավորում կհատկացվի:

ՀՐՈՒՑԱՎԵՐՆԵՐ ՎՈՐՄԱՐԱՆ՝ 1500 ԵՈՒ ՍԵՆՍՈՒՍՏԵՂՈՎ

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահան Բերդյանը, օգոստոսի 17-ին, այցելեց «Wellar group LLC» ընկերության նոր կառուցվող հրուշակեղենի գործարան, որը հագեցած է եվրոպական առաջատար ընկերություններից ներմուծված նոր սերնդի սարքավորումներով ու հոսքագծերով: Առաջիկայում նախատեսվում է գործարանի առաջին հերթի գործարկումը: Կստեղծվի մինչեւ 1500 նոր աշխատատեղ, ընթացիկ աշխատանքներում արդեն իսկ ներգրավված են բարձր որակավորում ունեցող մի շարք մասնագետներ: Գործարանն ունենալու է նաեւ սեփական հեղուկադրական լաբորատորիաները:

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԹՈՒՂԵՐՆԵՐԻ «ՊԱՋԵԼ» ՄԻԿՐՈՎՍՏՈՐԻՍՏԵՐԵ ՀԱՆՎՈՒՄ ԵՆ

Օգոստոսի 11-ից Երեւանյան երթուղիներում «ՊԱՋԵԼ» միկրովոթորուսները հանվել են: Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվությամբ, միկրովոթորուսային թիվ 70 երթուղու վերջին «ՊԱՋԵԼ»-ը վարել է Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը: Ըստ աղբյուրի, տրանսպորտային համակարգի բարեփոխումների շրջանակում, ընդհանուր առմամբ, 363 միկրովոթորուսային շարժակազմ է փոխարինվել ավտոբուսներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐՄՆԵՐԻ ԿԱՐՏՈՒՄԻ 3884 ՊԵՂԵ

Հայաստանի առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի տվյալներով՝ Հայաստանում կարճատև թիվը մեկ շաբաթում ավելացել է 11-ով եւ հասել 384-ի: Վարակվածներից մեկը հոսպիտալացվել է, 236-ը դուրս են գրվել հիվանդանոցից: Վարակվածներից 268-ը երեխաներ են, 116-ը՝ մեծահասակ:

ՄՊՂ ԵՐՐՈՐԳ ԽԱՂԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՊՈՒՄ ՈՒՔ ՄԵՂԱՆ Է:

ԳՐԻՐՈՐԳ ԽԱՂԵՐԵ ՎԵՆՉՎՈՒՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵԼԱՌՈՍԻ քաղաքներում եզրագծից հատկացված Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների երրորդ մարզական խաղերը, որին մասնակցեցին 22 երկրների ներկայացուցիչներ: Հայաստանի հավաքականը, ընդհանուր առմամբ, իր ակտիվում գրանցեց 8 տարբեր արժողության (2 ոսկե, 2 արծաթե եւ 4 բրոնզե) մեդալներ: Ոչ պաշտոնական թիմային հաշվարկում 242 մեդալով առաջատարը Ռուսաստանի թիմն է, երկրորդը՝ 193 մեդալով Բելառուսը, իսկ եռյակը՝ 85 մեդալով Եգրափակում է Ուզբեկստանը: Հայաստանն այդ աղյուսակում 6-րդն է: Նշենք, որ Մինսկում Գյումրին ձանաչվել է ԱՊՀ երկրների 2024 թվականի սպորտային մայրաքաղաք, որտեղ կանցկացվի նաեւ ԱՊՀ երկրների ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի խորհրդի համաժողովը:

ԻՐԱԿԱՆՑՎԵՑ ԵՐԵՎԱՆ-ԿԱՊԱՆ ԻՆՔՆԱԹԻՈՒ ԱՌԱՋԻՆ ԶՎԵՐԹԸ

Ապրիլի 26-ին Երեւանից դեպի Կապանի օդանավակայան փորձնական թռիչք էր իրականացրել 19 ուղեւորի համար նախատեսված չեխական արտադրության մարդատար օդանավը:



Ինչպես նշեց Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, փորձնական թռիչքի ընթացքում որոշակի խնդիրներ էին նախանշվել, որոնք լուծելու ուղղությամբ աշխատանքներ են իրականացնելու: Գնել Սանոսյանը ընդգծեց, որ Հայաստանի կառավարության

նպատակը Երեւանից Կապան կամոնավոր չվերթերի գործարկումն է:

Նշենք, որ Երեւան-Կապան առաջին չվերթի ուղեւորների թվում էր Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը: «Այսօր այցելեցի Սյունի-

քի մարզ Երեւան-Կապան ավիալիներով: Ծանոթացա նաեւ «Սյունիք» օդանավակայանում ստեղծված պայմաններին», - ֆեյսբուքյան իր էջում անդրադառնալով Սյունիք կատարած այցին, նշեց Նիկոլ Փաշինյանը:

ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՎ

Օգոստոսի 17-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը, որտեղ, այլ հարցերի թվում, քննարկվեց Հայաստանի ողջ տարածքում, մասնավորապես, ջրային պարեկային ծառայության ներդրման հարցը:

Քննարկման արդյունքում ընդունվեց որոշում՝ ՆԳ նախարարության ոստիկանության պարեկային ծառայության եւ դրա կազմում ձեւավորվող ջրային պարեկային ծառայության ստորաբաժանման գործունեության նյութատեխնիկական ապահովման, ինչպես նաեւ՝ ՆԳ նախարարության ոստիկանության կարիքների համար ֆինանսական միջոցների վերաբաշխում կատարելու նպատակով: Ինչպես նշեց Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը, ջրային պարեկային ստորաբաժանման ստեղծման նպատակը Սե-

անա լճում եւ լճի ավազանում իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումն է, որն իր բնույթով նոր ձեռագիր կապահովի բոլոր առումներով անվտանգ եւ ապահով Սեւանա լիճ ունենալու տեսլականի իրացման հարցում:

Նիկոլ Փաշինյանը կարեւորեց ընդունված որոշումն ու ընդգծեց, որ Սեւանա լճում պարեկային ծառայություն իրականացնելու անհրաժեշտությունն էական փոփոխություններ պետք է բերի:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԶՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՐԱՎԻԶ ԵՐԿԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՂ ԶՐՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹՎՈՎ ՎՐԱՍՏԱՆԸ ԵՐԿՐՈՐԴՆ Է

Հայաստանը գրեթե միշտ եղել է որպես հետաքրքիր ու առանձնահատուկ զբոսաշրջային ուղղություն՝ այցելուներին առաջարկելով երկրի հյուրընկալությունը, խոր արմատներ ունեցող պատմությունը, համեղ խոհանոցը, հիասքանչ տեսարաններն ու պատմամշակութային կոթողները, արկածային եւ գաստրոնոմիկ:

Հայաստանի Զբոսաշրջության կոմիտեի տվյալներով, 2023 թվականի հուլիսին Հայաստան է այցելել շուրջ 256 հազար զբոսաշրջիկ, ինչը լավագույն վիճակագրական տվյալն է՝ նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատ: 2022 թվականի հուլիսին Հայաստան է այցելել շուրջ

189 հազար զբոսաշրջիկ, իսկ 2019 թվականի նույն ժամանակահատվածում՝ 202 հազար: Զբոսաշրջային այցելությունների թիվը, 2023 թ. հունվարից հուլիս ընկած ժամանակահատվածում, կազմել է 1,26 մլն, որը 29 տոկոսով ավելի է 2019թ. նույն ժամանակահատվածի թվերից:

Հայաստան այցելող զբոսաշրջիկների թվերով առաջատար երկրներն են Ռուսաստանը, Վրաստանը եւ Իրանը:

Զբոսաշրջության կոմիտեն այս տարի աջակցում է նաեւ, Հայաստանի ամբողջ տարածքում, տարբեր ֆորմատի եւ նախասիրությունների շուրջ 17 փառատոների իրականացմանը, որը, ըստ կոմիտեի լրատվության եւ հասարակության հետ կապերի պատասխանատուի, ապահովել է ու դեռ կապահովի զբոսաշրջային մեծ հոսք դեպի Հայաստան:

11 ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔ ԽՆԼՍԾ ՎԹԱՐ՝ ԳՅՈՒՄԻ-ԼԱՆՁԻԿ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐԶԻՆ

Երեւան-Գյումրի ավտոճանապարհին, Լանջիկ գյուղի մոտակայքում, օգոստոսի 14-ին, ժամը 00:30-ի սահմաններում տեղի է ունեցել ավտովթար, ինչի հետևանքով մահացել է 11 քաղաքացի: Հինգ վիրավորների վիճակը, ըստ բժշկական կենտրոնից փոխանցված տվյալների, ծանր կամ ծայրահեղ ծանր է:

Գյումրի-Լանջիկ ավտոճանապարհին տեղի ունեցած ողբերգական ավտովթարի դեպքի առիթով հարուցվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով (ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որն անգզուշույթամբ առաջացրել է 2 կամ ավելի մարդու մահ): «Ա՛խնհիղոր Քորփորեյ՞ն» ՍՊԸ-ն, որը Լանջիկ-Գյում-

րի ճանապարհահատվածի վերակառուցումն իրականացնող կապալառու կազմակերպությունն է, հայտնում է, որ Մ-1 միջպետական ավտոճանապարհի 90-րդ կիլոմետր հատվածը, որտեղ այս գիշեր տեղի է ունեցել վթարը, կահավորված է անվտանգության համապատասխան տարրերով՝ զծանշված է, տեղադրված են ճանապարհային նշաններ: Վթարի վայրում երթևեկության թույլատրելի արագությունը 50կմ/ժամ է:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՕԳՈՍՏՈՍ 22.08.2023 Սուրբ Դովակիմի եւ Աննայի՝ Սուրբ Աստվածածնի ծնողների եւ Յուդաբեր կանանց հիշատակության օր



24.08.2023 Սուրբ Երեմիա մարգարեի հիշատակության օր

26.08.2023 Սուրբ առաքյալ Թովմասի հիշատակության օր

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՕՂԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ ԿՆՎԱԶԻ, ԲԱՅՑ ԵՐԿՐԻ ՈՂՋ ՏԱՐԱԾՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄՆԱԼ ՇՈՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ



Շրջակա միջավայրի ազգային գործակալության տեղեկատվության համաձայն, ընթացիկ շաբաթվա ընթացքում, օդի ջերմաստիճանը, նախորդ շաբաթվա համեմատ, կնվազի 2-3°C, թեև երկրի տարածքը շարունակում է մնալ շոգի ազդեցության տակ:

Առանձին օրերի, օդի ջերմաստիճանը Արևմտյան Վրաստանի հարթավայրերում կարող է հասնել 34°C, 36°C, Արևելյան Վրաստանում՝ 35°C, 37°C, իսկ լեռնային շրջաններում կբարձրանա մինչև 31°C:

Շրջակա միջավայրի ազգային գործակալությունը գզուշացնում է բնակչությանը, որ սպասվող բարձր ջերմաստիճանը բարենպաստ պայմաններ է անտառային հրդեհների եւ սառցադաշտերի հալման հետ կապված գործընթացների ակտիվացման համար:

ԹԵՃ ԳԻԾ

ԲՈՒՐՈՒՆ ԱՆԶՐԱԾԵՑ ՇՆՈՒՄՈՍԱԶԱՍԱՐՆԵՐ

- Շտապ բժշկական օգնություն - 112
Պարեկային ոստիկանություն - 112
Հրշեջ-փրկարար ծառայություն - 112
Պահակային ոստիկանություն - 125
Գլխավոր տեսչություն - 126
Տեղեկատու բյուրո - 118 08
Քաղաքապետարանի թեժ գիծ - 272-22-22
Առողջապահության նախարարության թեժ գիծ - 15-05
Ժողովրդական պաշտպան - 299-58-98, 292-24-79
Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն - 14-81
«Թբիլիսի Էներջի»-ի տեղեկատվական ծառայություն - 114, 240-40-04
«Վարկեթիլի»-ի տեղեկատվական ծառայություն - 227-50-40
ԹԵԼՄԻԿՈՒ-ի թեժ գիծ - 16 700, (+995 32) 5 000 777
Ջրամատակարարման թեժ գիծ - 293-11-11
Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ - (593) 50-42-52
Օդանավակայանի տեղեկատվական բյուրո - 231-03-41, 231-04-21
Երկաթուղային կայարան - 1331, 2199010
Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան - (599) 74-73-73

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-ԲԱԹՈՒՄԻ-ԵՐԵՎԱՆ ԱՎԻԱՌԵՐԹԸ ԳՈՐԾՈՒՄ Է

«Հայկական ավիաուղիներ» ավիաընկերությունը օգոստոսի 11-ից մեկնարկել է Երեւան-Բաթումի-Երեւան երթուղով չվերթեր:



Չվերթերը կիրականացվեն շաբաթական 2 անգամ: Չվերթերը կիրականացվեն Երեւան-Բաթումի-Երեւան երթուղով: Երթուղու վարչությունը հրատարակում է հետազոտության համաձայն, 2023 թվականի հուլիսին, Թբիլիսիում վաճառվել է 3 540 բնակելի բնակարան:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՅՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐ «ՎԵՐԻՆ ԼԱՐՍ» ԱՆՑԱԿԵՏՈՒՄ

«Վերին Լարս» անցակետի պլանային վերակառուցման հերթական փուլի անցկացմանը պայմանավորված օգոստոսի 17-26-ը «Վերին Լարս» անցակետում, Ռուսաստանից դեպի Վրաստան ուղղությամբ ինչպես ուղեւորատար, այնպես էլ՝ բեռնատար երթուղիների կիրականացվեն ասֆալտապատման աշխատանքներ:



Աշխատանքները, մասնավորապես, կիրականացվեն բեռնատար եւ թեթև մարդատար տրանսպորտային միջոցների երթուղիների գոտիներում, որոնք ժամանակավորապես, փուլաբար, կհանվեն շահագործումից, ինչի հետևանքով էլ աստիճանաբար կկրճատվի անցակետի թողունակությունը:

Վերոնշյալի կապակցությամբ «Վերին Լարս» անցակետի թողունակությունը հնարավոր է նվազի, ուստի, խորհուրդ է տրվում դիտարկել այլընտրանքային տրանսպորտային երթուղիներ:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԸ ՆՎԱԶԵԼ Է

Colliers Georgia առաջատար դիվերսիֆիկացված մասնագիտական ծառայությունների եւ մերթուրումների կառավարման ընկերության հրապարակած հետազոտության համաձայն, 2023 թվականի հուլիսին, Թբիլիսիում վաճառվել է 3 540 բնակելի բնակարան:

2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ վաճառքները նվազել են 7 տոկոսով: Շուկայի չափը նույնպես նվազել է 7 տոկոսով՝ հասնելով 189 մլն դոլարի:

Նույն տվյալների համաձայն՝ հուլիսին, նորակառույց մեդիում հատվածի բնակարանների պահանջարկն աճել է 10 տոկոսով, մինչդեռ էկոնոմ հատվածում գրանցվել է ընդամենը 2 տոկոս աճ: Ինչ վերաբերում է պրեմիում հատվածին, ապա գործարքների թիվը նվազել է 7 տոկոսով՝ հասնելով 191 միավորի:

Նորակառույց բնակարանների վաճառքի միջին գինը ծայրամասերում աճել է 9 տոկոսով, իսկ կենտրոնից ոչ այդքան հեռու եւ քաղաքի կենտրոնում գրանցվել է 5 տոկոս նվազում: Ինչ վերաբերում է հին բնակարաններին, ապա հին բնակարանների վաճառքի միջին գինը, նախորդ ամիս, աճել է 4 տոկոսով՝ թե՛ ծայրամասերում, թե՛ կենտրոնից ոչ հեռու, թե՛ քաղաքի կենտրոնում:

Colliers Georgia-ի թարմացված տվյալները ցույց են տալիս, որ նոր նախագծերում գործարքները, տարեկան կտրվածքով, աճել են 3 տոկոսով: Հին նախագծերի վաճառքը նվազել է 27 տոկոսով:

ԲԱՍԿԵՏՈՒ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ «ԹԲԻԼԻՍԻ ԻՄՊԱՉՎԱՅԻՆ ՎԱՎԱՌ» ՄՐՅՈՒՅԹԻ ՀԱՂՈՂ

Թբիլիսիում եզրագծող հատեց «Թբիլիսի միջազգային գավաթ» բասկետբոլի միջազգային մրցաշարը, որին մասնակցում էին Վրաստանի, Չեռնոգորիայի, Իրանի եւ Հորդանանի հավաքականները:

Մրցաշարը ավարտվեց Վրաստանի հավաքականի հաղթանակով: Վրացի բասկետբոլիստները եզրափակչում՝ 84:79 հաշվով հաղթեցին Չեռնոգորիայի հավաքականին:

Վրաստանը հաղթեց Հորդանանին (86:69), իսկ Չեռնոգորիան՝ Իրանին (81:66): Եզրափակչից առաջ կայացավ երրորդ տեղի համար հանդիպում, եւ Իրանը հաղթեց Հորդանանին (81:73):

«Թբիլիսի միջազգային գավաթ» մրցույթին մասնակցել են չորս երկրի թիմեր: Կիսաեզրափակչում:

Նշենք, որ օգոստոսի 26-ից վրացի բասկետբոլիստները կմասնակցեն աշխարհի առաջնությանը:

Table with 6 columns and 8 rows of numbers from 1 to 46.

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 4.Լատվիացի: 7.Սարսառ: 9.Ընդունակությունների զարգացման բարձր աստիճան: 11.Չերքեզի հարեւանը: 12.Վրացի արձակագիր, դրամատուրգ ... Կղիաշվիլի: 15.Խորհրդային ֆուտբոլիստ, դարպասապահ Ռինատ ...: 16.Խեթ, խոլոր: 17.Դռան բախում: 20.Իտալական ավտոմեքենա: 23.Քաղաք Վանա լճի ափին: 24.Նիսար: 25.Լեհաստանի բնակչուհի: 28.Քանոն՝ կոր գծեր քաշելու համար: 29.Թուրք գինվոր: 30.Կատակերգական բեմադրություն «... Կուլպա»: 32.Լատինական այբուբենի տառ: 34.Արկղածե շինվածք՝ կառույց: 37.Թիթեռ (գվռ.): 38.Միջատների խումբ: 39.Անձ, էակ: 40.Հույն պատմիչ եւ աշխարհագրագետ: 43.Քաղաք Կոլումբիայում: 44.Ընկեր-ը՝ իսպաներեն: 45.Վայրի բաղ, բաղիճոն: 46.Ցավակից:

ՈՐԿՈՆՆԱԿԱՆ. 1.Անպիտան, վնասատու վայրի խոտ: 2.Տվամարտիկ: 3.Գրավոր վկայագիր՝ փաստաթուղթ: 4.Քաղաք Անգլիայում: 5.Թույլ, անառողջ: 6.Վրաց մարզիկ, ԽՍՀՄ սպորտի վարպետ ... Կացրաշվիլի: 8.Լկոտի, լիր: 10.Հասույթ, եկամուտ: 13.Ես եկա, դու ...: 14.Հայտնագործություն: 17.Գետ Վրաստանում: 18.Հաստատուն: 19.Երկու ծայրերի մեջտեղը գտնվող: 20.Սպայական աստիճան: 21.Չմշակված աղաման: 22.Խոսքի մաս: 25.Արտասվել: 26.Հնդկական լեզվաընտանիքին պատկանող ազգ: 27.Թավ հոնքեր ունեցող: 28.Երեխայի փոխվող ատամ: 30.Լեռնազանգված, լեռնակույտ: 31.Լեռ պատմական Հայաստանում: 32.Մատակ ձի: 33.Թիկունքին զգվող զգեստ: 35.Լեռ Հայկական լեռնաշխարհում: 36.Թափանցիկ նյութ, որ ստացվում է կվարցի, ավազի եւ մի քանի այլ նյութերի խառնուրդի հալումով եւ քիմիական մշակումով: 41.Անբնակ: 42.Շունչ, ավյուն: Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱՐԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉՔԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Երեքնուկ: 5.Շոլոխով: 9.Արեմի: 11.Գեր: 12.Սիերա: 13.Լեոնցի: 15.Բառ: 16.Ուր: 17.Ակացիա: 19.Նեռ: 20.Ականատ: 23.Ցքի: 25.Յանկի: 28.Տաճար: 31.Գանգես: 34.Արիմա: 35.Արգինա: 36.Ճար: 37.Ռա: 38.Հավ: 39.Սիեր: 41.Սկի: 43.Գիտ: 44.Բիրտ: 45.Լուս: 46.Երիտ: 47.Ալտաու: 49.Տնա: 51.Սուրինամ: 53.Կարիմե: 54.Բատատ: 55.Ապա: ՈՐԿՈՆՆԱԿԱՆ. 1.Եռաբլուր: 2.Եղեգն: 3.Նաիրի: 4.Կարս: 5.Շերեք: 6.Լուսաբաց: 7.Խոժոռնի: 8.Վրիժառու: 10.Նեցուկ: 14.Եր: 17.Անա: 18.Կանգա: 20.Արճիճ: 21.Այրարատ: 22.Տկարամիտ: 24.Քասախ: 26.Ինճ: 27.Վալիկո: 28.Տարիճե: 29.Ար: 30.Անահիտ: 32.Գինետուն: 33.Են: 40.Հրատ: 41.Սլավա: 42.Իսանցի: 43.Գիճու: 44.Բլթակ: 48.Վիշտ: 50.Աշնա: 52.ՄԱԿ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՉՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՔՅՅԵՈ ՅՈՆՁՅՅԵՄՈ: ՄԾՈԼՇՈՆՈ 0105, Ճ.ՅՄԹԵՅՇՇՈՆ ԺՅԻՃ 5, ՄԵՐ ԽԱՍՏԵՆ ԹԲԻԼԻՍԻ 0105 Գ.Աթոնելի փ. 5
ԹՅՇ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈՆՈՐ» հրատարակչություն

«ՅՐԱՆԹՅՈՒՆ»
ՄԾՈԼՇՈՆՈ, ՆՅՅՅԵՄՇՇՈՐ
«ՅՐԱՏՈՒՆ»
Тбилиси, Грузия
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445